2021-22թթ. ուս տարվա կարիերայի կենտրոնի

հաշվետություն- վերլուծություն

Կարիերայի կենտրոնի առաքելությունն է ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը և աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշման ուղղորդումը: Իր գործունեությամբ Կենտրոնը նպաստում է բուհ-շրջանավարտ-գործատու կապի հաստատմանն ու ամրապնդմանը:

2021-22թթ. ուս տարվա ընթացքում կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել է հետևյալ միջոցառումներն ու հանդիպումները.

1.Ճանաչողական այցեր.

- ✓ Հայաստանի հանրային ռադիո «Բիզնես և կրթություն գործընկերություն հիմնադրամ»-ի աջակցությամբ -08.10.21թ.
- ✓ Ալ. Սպենդարյանի անվան Օպերայի և բալետի ակադեմիական թատրոն- 15.02.22թ.
- ✓ «Կոկա- կոլա» ընկերություն- 12.04.22թ., 14.04.22թ., 21.04.22թ.
- ✓ «Բեկոն-Պրոդուկտ» -ՍՊԸ- 19.04.22թ.
  - Գործարաններ ճանաչողական այցերի շրջանակում սովորողները ծանոթանում են տվյալ կազմակերպության, գործարանի պատմությանը, բրենդի ստեղծման պատմությանը, մարքեթինգին, արտադրությանը, որակին, հումքին և այլն:
  - Հայաստանի հանրային ռադիո այցելության ժամանակ ուսանողները ծանոթացան հանրային ռադիոյի ստեղծման պատմությանը, մասնակցեցին արխիվային սկավառակների թվայնացմանը, հնչյունային մոնտաժման գործընթացին, ներկա գտնվեցին ուղիղ եթերի միացմանը:

Ճանաչողական այցերի շրջանում իրականացված հարցումներից ունենք հետևյալ տեսքը՝ ըստ գնահատման թերթիկների.

- Այցից սպասելիքները-78%
- Այցի արդյունավետությունը- 72%
- Որքանով այցը նպաստեց մասնագիտական կարողություններին և հմտություններին- 65%
- Արդյոք կարևորում եք նմանատիպ միջոցառումները- 85%

Ուսանողների կողմից ստացել ենք առաջարկներ հաճախ կազմակերպել նմանատիպ միջոցառումներ:

2. **Բաց դռների օր. (բուհ, շարունակական կրթություն)**

- ✓ Երևանի Գլաձոր համալսարան-30.09.21թ.
- ✓ ՀՊՏՀ-08.10.21թ.
- ✓ ՀԵՀ(Հայաստանի Եվրոպական համալսարան)-25.01.22թ.
- ✓ Եվրասիա միջազգային համալսարան-08.04.21թ.
- ✓ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան-11.03.22թ.
- ✓ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան-03.05.22թ.
- ✓ ՀՊՄՀ-04.05.22թ.

Բաց դռների օրվա շրջանակում ուսանողները ծանոթանում են Բուհ-ի մասնագիտություններին, պայմաններին, նորարարական ծրագրերին, որը հեշտացնում է հետագա կողմնորոշմանը Բուհ ընդունվելիս:
Շարունակական կրթության, բուհ ընդունված ուսանողների վերաբերյալ կատարվել են հարցումներ և ունենք հետևյալ տեսքը.

- ԵԹԿՊԻ(Երևանի թատրոնի կինոյի պետական ինստիտուտ»-29%
- ՀԱԱՀ-(Հայաստանի ազգային ագրային համալսարան)-6.4%
- ՀՊՏՀ (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)-6.4%
- ՀԵՀ (Հայաստանի Եվրոպական համասարան)-19%

Սակայն ունենք Բուհեր, որտեղ շրջանավարտները չեն ցանկացել շարունակել իրնց ուսումը, որոնցից են ՀՊՄՀ-ն, Հայաստանի Ռուսական տարածաշրջանային ակադեմիա:

2. **Վարպետաց դասեր, սեմինար-քննարկումներ, թրեյնինգներ, աշխատաժողովներ. ցուցահանդեսներ**

- ✓ Երևանի Գլաձոր համալսարանում «Էլ Ֆոր» հաշվապահական ընկերության կողմից կազմակերպված վարպետաց դաս -02.11.21թ.
- ✓ CareerLab- ի կողմից կազմակերպված աշխատաժողով, դասընթացների մասնակցություն:-12.11.21թ.
- ✓ ՀԵՀ-ում «Մեդիագիտություն» և «Կառավարում» ամբիոնների կողմից կազմակերպված վարպետաց դասեր:-17.11.21թ.
- ✓ «Վարդանյանս ուսումնական» կենտրոն «Հիասթափությունների կառավարում» թեմայով դասընթացի մասնակցություն-10.03.22թ.

- ✓ Վարպետաց դաս՝ «Անի Պլազա» հյուրանոցի ավագ խոհարար Գևորգ Ստեփանյան-25.04.22թ.
- ✓ Վարպետաց դաս-«Ջանֆո» ասիական ապուրների ռեստորանի ավագ խոհարար՝ Խորեն Հարությունյան-26.04.22թ.
- ✓ «Կրթություն և կարիերա»- EXPO ցուցահանդես-28.04.22թ.
- ✓ Աշխատանքի օրվան նվիրված աշխատաժողով:-01.05.21թ.

Վարպետաց դասերի, աշխատաժողովների համար ևս արվել է հարցումներ և ըստ գնահատման թերթիկների ունենք հետևյալ տեսքը.

- Վարպետաց դասից սպասելիքները-82%
- Դասի արդյունավետությունը- 68%
- Որքանով դասը նպաստեց մասնագիտական կարողություններին և հմտություններին- 52%
- Արդյոք կարևորում եք նմանատիպ դասընթացները- 87%

Ուսանողները նշել են նաև, որ շատ կարևոր է նմանատիպ հանդիպումները, նպաստում են մասնագիտական կարողությունների, հմտությունների զարգացմանը, ինչպես նաև մտածողությանն ու հաղորդակցմանը:

Իր գործունեությամբ Կենտրոնը նպաստում է բուհ-շրջանավարտ-գործատու կապի հաստատմանն ու ամրապնդմանը:

Մշտապես կապ հաստատելով շրջանավարտների հետ տիրապետում է շրջանավարտների աշխատատեղերի փոփոխության մասին հիմնական տեղեկատվությանը: Կարիերայի կենտրոնը էլեկտրոնային հասցեների ու խմբերի, սոցիալական ցանցերի միջոցով թափուր աշխատատեղերի, սեմինարների, կամավորական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն է տարածում ուսանողների և շրջանավարտների միջավայրում:

Համագործակցելով մի շարք կազմակերպությունների հետ, կենտրոնը օժանդակում է քոլեջին՝ գործատուների հետ կնքել պրակտիկայի անցկացման պայմանագրեր, շրջանավարտներին աջակցում է ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատատեղերում աշխատանք գտնելու հարցում:

Կարիերայի կենտրոնը սերտ համագործակցում է քոլեջի ներքին որակի ապահովման կենտրոնի,պրակտիկայի կենտրոնի, ամբիոնների հետ, որն էլ ավելի է բարելավում կենտրոնի գործունեությունը:

Կատարող կարերայի կենտրոնի պատասխանատու՝ _____ Լ. Զուլիակյան